МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

MINISTRY OF CULTURE OF THE
REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

31.07.12 N 03/2.1/3099-12

Ձեր N _____ առ _____

Պետրախ-Տիկվայի իսրայելահայերի
«Նաիրի» միության հիմնադիր կազմին
/E-mail: Nairi Israel@walla.com/

Հարգելի իսրայելաբնակ հայրենակիցներ

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանին ուղղված Ձեր 2011 թ. դեկտեմբերի 13-ի նամակը ՀՀ Նախագահ աշխատակազմի ղեկավարի 2012 թ. հուլիսի 10-ի N Ղ-1205 գրությամբ վերահասցեագրվել է ՀՀ մշակույթի նախարարությանը:

Իսրայելաբնակ կոմպոզիտոր Նուբար Ասլանյանի հեղինակած «Սիփանա քաջեր» կոնցերտ-պոեմը հնչեցնելու առաջարկի կապակցությամբ, հայտնում ենք, որ վերոնշյալ կոնցերտ-պոեմի կատարումը կարող են իրականացնել Հայաստանում գործող միայն երկու՝ Հայաստանի պետական և երիտասարդական սիմֆոնիկ նվագախմբերը: Սակայն երիտասարդական նվագախմբում բացակայում է փողային նվագարանների կազմը, առանց որի հնարավոր չէ իրականացնել կոնցերտ-պոեմի կատարումը, ինչպես նաև առկա է Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար Էդ. Թոփչյանի 09.06.2009 թ. N 531 գրությունը, ըստ որի նպատակահարմար չի գտնվել ստեղծագործությունն ընդգրկել նվագախմբի երկացանկ և հնչեցնել, ինչն առիթ է հանդիսացել հեղինակի և ՀՊՖՆ-ի ղեկավարության միջև տարիներ շարունակ ընթացող բանավեճերի ու փոխադարձ մեղադրանքների:

Ինչ վերաբերում է կոմպոզիտորի հեղինակած մյուս ստեղծագործություններին, ապա նախարարության աջակցությամբ իրականացվում է հայ կոմպոզիտորական արվեստի ամենամյա փառատոն, որի ծրագրերի մշակման գործընթացը վերապահվում է կոմպոզիտորների միությանը /ինչպես նշում եք նամակում Ն. Ասլանյանը այդ միության անդամն է/՝ կոմպոզիտորների կողմից ներկայացված հայտերի հիման վրա: Այդ ստեղծագործությունները հեղինակն ինքը պետք է ներկայացնի փառատոնի կազմկոմիտեին, ինչպես բոլոր մասնակիցները: Իսկ Ն. Ասլանյանը անընդհատ կապի մեջ է կոմպոզիտորների միության նախագահի և փոխնախագահի, ինչպես նաև բոլոր անդամների և երաժիշտների հետ: Նախարարությունը երբևէ չի միջամտել ստեղծագործական միությունների և կոլեկտիվների ծրագրերին և դրա իրավունքը չունի: Նախարարության գործառույթը

ՀՀ, Երևան, 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական 3 տուն
Республика Армения, Ереван 0010, площадь Республики, Дом правительства,N 3
Government Building N 3, Republic square, 0010, Yerevan, Republic of Armenia

ներկայացված ծրագրերի իրականացմանն աջակցելն է, իսկ ծրագրերն ու համերգացանկերն երաժշտական կոլեկտիվները ձևավորում են ինքնուրույն՝ գեղարվեստական խորհուրդների եզրակացության հիման վրա:

Ի հավելումն ասվածի, այնուամենայնիվ, հարկ ենք համարում նշել, որ Ն. Ասլանյանին նախարարության կողմից ցուցաբերվել է բավարար ուշադրություն, և նրա ստեղծագործությունները ոչ միայն սփյուռքահայ, այլ նաև հայաստանաբնակ կոմպոզիտորների գործերի համեմատ Հայաստանում ամենաշատ կատարվողներից են: Նրա տարբեր ժանրերի ստեղծագործությունները վերջին տարիներին մշտապես ընդգրկվել են երաժշտական տարբեր փառատոների ծրագրերում, ինչպես նաև համերգային կազմակերպությունների /Երևանի պետական կամերային երգչախումբ, Հայաստանի մենակատարների պետական անսամբլ/ երկացանկերում, ինչի մասին, զարմանալիորեն, Ն. Ասլանյանը համառորեն լռում է տարբեր ատյաններին ուղղված իր բազմաթիվ նամակ-բողոքներում: Միաժամանակ նշենք, որ ընթացիկ տարում Գյումրու «Վերածնունդ» երաժիշտ-կատարողների միջազգային մրցույթ-փառատոնի շրջանակներում հնչեցվեց Ն. Ասլանյանի շեփորի համար գրված կոնցերտինոն /նշենք նաև, որ մրցույթ-փառատոնը անցկացվում է ՀՀ մշակույթի նախարարության հովանավորությամբ/, որի մասին կրկին անգամ լռում է հեղինակը:

Ինչ վերաբերում է «100 համերգ Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակին» ծրագրի շրջանակներում Ն. Ասլանյանի հեղինակած ստեղծագործությունների հնչեցման Ձեր առաջարկին՝ տեղեկացնում ենք, որ վերոնշյալ ծրագիրը իրականացվում է բարեգործական հիմունքներով, հայ և արտասահմանյան երաժիշտների և համույթների նախաձեռնությամբ՝ վերջիններիս ծրագրային ընտրությամբ:

Ա. ՍԱՄՈՒԵԼՅԱՆ

Ա. Ղազարյան
☎ 52-19-72